

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.



ԲՈՎԱՆԴԱՅԻՆԹԻՒՆ

Սպասում են. Ո՛վ պէտք է անէ.—Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Արուեստը գերմանական բալետ-
տաղում:

Ս Պ Ա Ս ՈՒ Մ Ե Ն

Մեր ունեւորների ուշադրութիւնն ենք
գարձում այն բազմաթիւ չքաւոր ընտա-
նիքների վրա, որոնք առաջիկայ ձառնի
տօներին պէտք է զրկված լինեն ոչ միայն
տօներին համապատասխան, այլ և փոքր ի
շատէ մարդավարի ապրուստ ունենալուց:
Մենք ճանաչում ենք շատ ընտանիքներ,
որոնք անտանների նեղութեան մէջ են,
բայց երբեք չեն դիմում մուրաքիանու-
թեան և միայն միջոցներ և ձառնի տօնե-
րին փտաճանում են ազիզ օրերի ա-
նունով նպատակներ խնդրել ուրիշներից:
Ձեռնարկութիւնը, որ միշտ ծանր է և մա-
շող, դառնում է սարսափելի այն օրերը,
երբ շրջակայքը գտնվում է հանգիստ-
ւոր պարտաւորութիւնների և ուրախու-
թեան մէջ: Այդտեղ միանում են ֆիզի-
քական գրկանքը բարոյական տառապանքի
հետ: Ձեռնարկը անկարող է գոնէ մի քանի
օր իրան լաւ զգալ, գոնէ մի քանի օր կոշտ
և ուրախ լինել:

Ամեն տարի մենք ստանում ենք մասնա-
ւոր նպատակներ տօներին բաժանելու հա-
մար և գիտենք ինչ անսահման ուրախու-
թիւն է տիրում չքաւորի ընտանիքում այն
համեստ նպատակներից, որ նրան տրվում
է: Թող իւրաքանչիւր մարդ, որ կարող է օգ-
նել իր չքաւոր հարկանին, մտածէ նրա
մասին և իր ուրախութիւններին մասնա-
կից անէ նրան՝ բաժին հանելով իր ունե-
ցածից:

Յոյս ունենք, որ կը գտնվեն բաւակա-
նաշափ բարեխիտ անձինք և այդ մարդա-
սիրական փոքրիկ պարտաւորութիւնը կը
կատարեն պատրաստակաւութեամբ:

Ո՛վ ՊԵՏԻ Է ԱՆԵ

Ուրախ լեռնաշղթայի լանջերի վրա նաւ-
թի նշաններ երեւոյթ յարուցել է մեծ

Բ Ա Ն Ա Ս ՈՒ Ր Ա Կ Ա Ն

ԱՐՈՒՆԵՍԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՅՈՍԱԳՈՒՄ (Նամակ Գերմանիայից)

Գերմանիայում անա մի քանի շաբաթ է, որ
տիրում է մի արտասովոր շարժում: «Բանա-
ստեղծների» և «մտածողների» հայրենիքը,
ուր հասարակական ամենալուրջ խնդիրներն
ըստ երեւոյթին խաղաղ եւ անվրդով սահուն-
ութեամբ էին լուծվում—ընդունակ է նոյնպէս
յուզվել, տաքանալ, մինչեւ իսկ փոթորիկներ
յարուցանել: Այս անգամայն յուզումը համա-
տարած է, տեսնում եւ աղմուկից շարժում թէ
գեղարուեստական եւ թէ մտաւոր աշխարհում,
թէ պարլամենտական կենսութեւն և թէ պար-
բերական մամուլի մէջ: Եւ ինչպիսի հեղեղա-
կան զուգարկութիւն. մինչդեռ մի կողմից
«Ջրային տեղում» վարակվածները, ապագայ
«մեծ Գերմանիայի» ցնորքը փայփայողները
իրանց հայրենիքի նաւատորմը աւելացնելու
նախագիծն են առաջարկում արտաքին ոյժը
մեծացնելու համար, միւս կողմից «երկու դա-
ւանանքի խաւարապաշտները» կենտրոն—կա-
թոլիկ կուսակցութիւնը եւ պահպանողական-
ները, անազան յետադէմ ուսմաններով ըս-
պառնում են Գերմանիայի ներքին բարո-
յական ոյժը մտաւոր եւ գեղարուեստական
վարկը նսեմացնել և XX դարի չէմբում ար-

հետաքրքրութիւն, սակայն կանոնաւոր
շահագործութիւն չէ սկսված և յայտնի
չէ թէ որքան մեծ է նաւթաբեր հողերի
տարածութիւնը: Հարց է ծագում թէ ո՞վ
պէտք է կատարէ նաւթաբեր հողերի հե-
տադաւորութիւնը՝ պետութիւնը թէ մաս-
նաւոր անձինք: Անկասկած՝ եթէ պետու-
թիւնը իր վրա վերցնէր այդ գործը, նա
կարող կը լինէր կարճ ժամանակամիջո-
ցում հմուտ մասնագէտների ձեռքով ըն-
դարձակ տարածութիւններ քննել և յե-
տոյ ձեռնառն պայմաններով կապալով տալ
ցանկացողներին, բայց այդ հետադաւոր-
ութիւնը շատ մեծ ծախք է պահանջում,
որ պետութիւնը չէ կամենում անել: Մաս-
նաւոր ձեռնարկողներն էլ գործ կը սկսեն
միայն այն դէպքում, եթէ հողերը տրվին
նրանց արտօնեալ պայմաններով:

Ոչ միայն Ուրախի նոր միայն յայտնի
դարձած, այլ և Անդրկովկասի և նոյն իսկ
Ապշերոնեան թերակղզու նաւթաբեր հո-
ղերի մեծագոյն մասը դեռ հետադաւորված
չէ: Վառավարութիւնը ինքը չէ փտաճա-
նում մեծ գումարներ ծախելով իսկ մաս-
նաւոր մարդկանց էլ չէ թող տալիս վերց-
նել այդ հողերը, ենթադրելով, որ այդ
հողերի նշանաւոր մասը առատ է նաւ-
թով և կրննի մասնաւոր անձերի ձեռքը,
գրկելով զանազան մեծ օգուտներից:

Վառավարական շրջաններում մշակ-
վում է մի ծրագիր, որ գիտաւորութիւն
ունի միացնել պետութեան և մասնաւոր
ձեռնարկողների շահերը հետեւեալ կեր-
պով: Այն հողերը, որտեղ ենթադրվում է
թէ կան նաւթի հանքեր, պէտք է բա-
ժանվեն մաս մաս և այդ մասերից մի քա-
նիսը զանազան տեղերում տրվեն իբրեւ
փորձական բաժիններ մասնաւոր անձանց
արտօնեալ պայմաններով: Երբ մասնաւոր
անձինք իրանց բաժիններում կը գտնեն
նաւթ, անկասկած այդ բաժիններին կից
հողերն էլ գին կը ստանան: Այդպիսով
կարելի կը լինի՝ ձրի կերպով և չը խան-
գարելով պետական շահերը՝ հետադաւորել
նաւթաբեր հողերի շատ կէտերը:

Իսկ այն տեղերում, որտեղ չը կան մաս-
նաւոր ձեռնարկողներ, պէտք է առաջին
փորձերը անէ ինքը կառավարութիւնը
կամ ապահովէ մասնաւոր ձեռնարկողների
ծախքերի մի որոշ մասը:

Լեստի եւ մտքի ազատութիւնը մինչեւ իսկ կա-
խաղան բարձրացնել:

Անբարոյականութեան դէմ կուելու օրինա-
գիծը, որ ընդհանուր մականունով կոչվում է
«Lex Heinze» *) եւ որի գլխաւոր հեղի-
նակն ու պաշտպանը գերմանական բալետա-
դու կենտրոնի կուսակցութիւնն է—բաւա-
կանին հին է. կառավարութիւնը առաջին ըն-
թերցումը ժամանակի դէմ էր օրինաւորի մի
քանի կէտերին, իսկ երկրորդ ընթերցումը ժա-
մանակ աւելի բարեհաճ դէմք ցոյց տուեց:
այնպէս որ կենտրոնի եւ կառավարութեան մէջ
եղած փոխադարձ զինումներն չնորձիւ համա-
րեալ թէ անկասկած էր, որ օրինաւորը երրորդ
ընթերցումից յետոյ անշուշտ կընդունվի թէ
երրորդ ընթերցման ժամանակ օրինաւորը ինչ
ճակատագրի ենթարկվեց՝ այս մասին կը խօ-
սենք յետոյ: Իսկ առ այժմ անցնենք Lex Hein-
ze-ի այն էական յօդուածներին, որոնք կապ
ունեն գեղարուեստի եւ թատրոնի հետ:

Օրինաւորի 184a յօդուածում ասված է.
«Նա, ով որ այնպիսի գրուածներ, պատ-
կեններ կամ տեսարաններ, որոնք առանց
անպարկեշտ լինելու ամօթի զգաց-
մունքը կուպիտ և կերպով վերաւո-
րում են—իրեւ առեւտրի առարկայ դա-
թակցեցողից կերպով ի ցոյց է դնում կամ
ի վաճառ է հանում փողոցներում, հրապա-
րակներում եւ հասարակաց յարաբերութեան
համար ծառայող ուրիշ վայրերում—ենթարկ-
*) Lex Heinze (Հայնցի օրէնքը) անունը կապ-
ված է Լեքս Heinze-ի հետ, որ մի շարք անպատկառ
արարքների պատճառով 90-ական թականների սկզբ-
քին դատաւարական մի դշուկի պրօցէսի նիւթ էր
գարձել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ ՈՒ Լ

Անցեալ տարի, եթէ յիշում են մեր ընթեր-
ցողները, շատ երկար ժամանակ եւ շատ պեր-
ճախուս եղանակով խօսում էին Բագուի նաւ-
թային արդիւնաբերութեան զոհերի մասին:
Թէ մասնաւոր եւ թէ իրանք, նաւթարդիւնա-
բերողները, միաբերան վկայում էին, որ բան-
ւորի դրութիւնը նաւթահանքերում սոսկալի է:
Սոսկալի թէ այն պտածառով, որ նա ապրում
է աշխատում է ամենապատ առողջապահական
պայմանների մէջ, բայց մանաւանդ այն պատ-
ճառով, որ նա, այդ աշխատող ու տանջվող
մարդը, իր կեանքի տէր չէ, իւրաքանչիւր
բօլէ ենթարկված է մահվան վտանգին կամ
առնուազը կարող է ամեն մի ջնջին պատահա-
րից անդամաւոր դառնալ, աշխատանքի անըն-
դունակ մի մարդ: Դուք, անշուշտ, յիշում էք
թէ անցեալ տարվայ ժողովում նաւթային ա-
րդիւնները ինչպիսի ոգեւորութեամբ ծափա-
հարում էին, երբ ժողովի անդամներից մէկը
կարգաց զեկուցում բանուորների դրութեան
մասին եւ հրաւերեց գործադուլների մարդաւի-
րական ուշադրութիւնը այդ դժբաղդների վրա:
Ոսկի կուռքերի մարդասիրութիւնը այդ ծա-
փահարութիւններից հետո չը գնաց. լուսին
միջոցներ դարսող ձեռքերի ձայները, մամուլը
յարձակվեց, ծաղրեց, պահանջեց, բայց մերժը
էլ իրեց, եւ դրութիւնը մնաց անփոփոխ: Ահա
այդ դրութեան մի կտորը, որ ներկայացնում
է «Тифл. Лист» լրագրի թղթակցից: Բաւա-
կան է քիչ ուշադրութեամբ հետեւել այն պա-
տահարների ցանկին, որոնք տեղի են ունե-
ւում նաւթահանքերում, եւ դուք բանուոր
մարդկանց մարտիրոսագործութեան մի անսպառ
ցանցի մէջ էք: Այստեղ կոտորված ոտք, այն-
տեղ ջարդված մէջք, միւս տեղ պատռված
փոր եւ այլն եւ այլն: Օրէնքը պարտաւորեց-
րէ է գործադուլին, որ նա վարձատրութիւն
տալ բանուորին ամեն անգամ, երբ նա վնաս-
վում է, դառնում է աշխատանքի անընդունակ:
Բայց գործատէր հարուստը այնքան էլ խեղճ
մարդ չէ, որ թող տալ զանազան մուծ ու
զգզված մարդկանց ջերթի իր իւրտ կաշին:
Եւ անա նա դիմում է հազար ու մի միջոցնե-
րի՝ իր օձիքը պահանջողներին զաւտելու հա-
մար: Նաւթագործը կանոնաւոր, կազմակերպված
կուռք է մղում ջարդված, կիսակենդան մարդ-

վում է վեցամսեայ բանտարկութեան կամ
600 մարկ տուգանքին:

184b — «Նա, ով որ երգեցողութեան, բե-
մական եւ ուրիշ նոյնանման հրապարակական
արուեստների ժամանակ այնպիսի դպրեակ-
ղեցուցիչ գործողութիւններ է կատարում,
որոնք առանց անպարկեշտ լինելու ամօթի
զգացմունքը վերաւորում են—ենթարկվում
է իրանայ բանտարկութեան կամ 1000
ր. տուգանքին:

Այնպիսին է իւրաքանչիւր ընթերցողի համար
թէ այս երկու յօդուածները մի կողմից որքան
անորոշ, առաճախան եւ միւս կողմից որպիսի
ստորագնաց ընաւորութիւն են կրում: Դեռ
առանց քրքրելու օգն խնդրել թէ բուն գե-
ղարուեստական երկերը որ եւ է կապ ունեն
«անբարոյականութեան» եւ «անամօթի»
հետ—հարց է ծագում. ով է քննիչը, որոշիչը
այն երկերը կամ գործողութիւնները, որոնք
առանց անպարկեշտ լինելու ամօթի զգաց-
մունքը կուպիտ կերպով վերաւորում են», ով
ցոյց տալու «բարոյականի» եւ «անբարոյակա-
նի», «պատկառութի» եւ «անամօթի» մէջ եղած
տարբերութիւնը—զատաւորը եւ հասարակ ու-
սիկանը: Ահա թէ ուր է առաջնորդում վե-
րոյիչեալ յօդուածների միտքը:

Թէ Գերմանիայում, ինչպէս եւ եւրօպական
միւս երկրներում յաճախ երեւան են գալիս
այնպիսի անխել չար շինքեր, թափառալիկ
արկիւններ, որոնք իրանց «ապարանքներով» մի-
այն դպրեակցութեան թոյն են տարածում—
առ մի դառն իրականութիւն է: Բայց այս տե-
սակ չըմտելիների «ապարանքները» ինչ կապ

կանց՝ նրանց արեան գինը չը վճարելու համար:
Այդ կուռք մէջ նա էլ, այսինքն այդ նաւ-
թագործը, ունի իր ուրախութիւններն ու
տիրութիւնը:

Անկարագրելի է գործատէրի ուրախու-
թիւնը, երբ բանուորը դժբաղդ դէպքից ուղ-
ղակի մեռնում է: Մեռել է բանուորը. ով
պիտի նրա դատը վարէ, ով պիտի յիշէ նը-
րան: Ազգականները հետո են, Պենդայի նա-
հանգի մի որ եւ է կորած անկենդան, նա-
խիջեանի գաւառի մի որ եւ է գիւղում,
Դաղստանի լեռներում կամ աւելի էլ հեռու—
Պարսկաստանում, Թիւրքիայում: Ե՛րբ տուն
կը հասնէ լուր, թէ մեռել է նա, որ կորա-
կրում էր այդ տունը, մեռել է, ընկնելով
տաան սաճեանոց վիշկայից կամ մի այլ
դժբաղդ պատահարից: Վերելից եկած ներ-
շնչումով մանր ծառայողները հրամայում են
մեռածի ծանօթներին կամ երկրպագներին
չը հաղորդել նրա ազգականներին այդ եղբ-
բաղդ դէպքի մասին, թէ չէ՝ նրանք կը
զրկվին տեղից: Անցնում են շաբաթներ, ա-
միսներ, ապացոյցները նսեմանում են, ակա-
նատես վկաները դէս ու գէն են ցրվում:
Էլ ուր գտնել նրանց եւ հարցաւորած անել:
Հէնց այս բանն էլ հարկաւոր է «խօզէնին»:
Բայց տանք սկսում են անհանգստանալ կե-
րակողի մասին: Առաջ նա ճշգրտութեամբ
փող էր ուղարկում, այժմ—յանկարծ լուի է
եւ կոպէկ էլ չէ ուղարկում: Նամակներ են
թափվում ծանօթ համագիւղացիների վրա,
գիմում են եւ «խօզէնին»: Վերջապէս մի
ինչ որ միջոցով տուն է հասնում մահվան լու-
րը: Բազուկ է ճանապարհորդ մեռածի ծերունի
հայրը կամ պառու մայրը կամ թէ ալ ինչ:
Գիտի ինչպիսի ներկայանում են «խօզէնին»,
բայց առանց որ եւ է թղթի, առանց որ եւ
է լեռագործական ժառանգակիցների կողմից:
Հէնց այդ էլ հարկաւոր է գործատէրին:

Եւ սկսվում են խաբեայութիւններ:
Գործատէրը իր զօնի ժառանգներին նախ զար-
մացնում է իր առատաձեռն բարերարութեամբ,
տալով նրանց մի երեք ռուբլի. ապա, երբ
շատ են տանում նրա գուլը, յայտնում է, որ
ոչինչ փող չի տալ, մինչեւ որ «թղթեր» չը
բերեն: Պէտք է վերադառնալ գիւղը, պէտք է
խնամակալութիւն հաստատել, վկայականներ
ստանալ եւ ապա ճանապարհվել Բագու: Երե-
ւակայեցէք թէ որքան չարաշարժ, որքան
դէս ու գէն ընկնել է հարկաւոր այդ բոլորի
համար: Վերջապէս ամեն ինչ կատարված է
եւ արեան տէրը, օրինական թղթերը ձեռքին,
գին է պահանջում: Այդտեղ հան սկսվում է
նոր խաղ: Նաւթագործին ծառայելու համար
պատրաստ են գաղտնադրել եւ աշխարհ գոր-
ծող փաստաբաններ:

ունեն իսկ կան արուեստի հետ. եթէ խն-
դիրը այս «ապարանքներն» է վերաբերում
ոտարկանութիւնը տանց Lex Heinze-ի էլ թէ
թատրոններում, թէ հրապարակներում եւ թէ
խանութներում մինչեւ այժմ կատարել է իր
դերը եւ կատարում է—աւղղ թէ անաւղղ այդ
մի կողմ թողնեք: Եւ հազիւ թէ գտնվի մի
լուրջ եւ արուեստից նոյն իսկ տարրական հաս-
կացողութիւն ունեցող անհատ, որ խորին հա-
մակութեամբ չը վերաբերվի, երբ հարց է
գրվում այդ տեսակ «ապարանքներ» արմատախիլ
անել կամ վաճառողներին խիստ պատժի են-
թարկել: Բայց «Lex Heinze»-ի հեղինակները
ուզում են շատ աւելի առաջ գնալ, սա պարզ
երեւաց, իր սօցիալ դէմօկրատներից մէկը՝
Հայնց առաջարկեց վերոյիշեալ յօդուածներից
յետոյ գնել այս յաւելումը թէ «ներկայ յօդուած-
ները գիտութեան եւ արուեստի վե-
րաբերմամբ անգործադրելի են մը-
նում»—կենտրոնը եւ պահպանողականներն ի
հարկէ խիստ կերպով ընդդիմացան այս առա-
ջարկին, այլ եւս ամեն ինչ անկայտնի էր...:

Գերմանական «երկու դաւանանքի խաւա-
րապաշտները» գեղարուեստի իսկական էու-
թեան մասին զաղափար անգամ չունենալով
իրանց յետադէմ յարձակումների կենտրոնական
կէտը մարդկային (մինչեւ իսկ անհասկանալի!!)
մարմնի «սերկութիւն» կը ընտրէր: Բայց նրանք
կոյր են «երկութիւն» կեանքում եւ մեր-
կութիւնը արուեստի մէջ միանանցից տար-
բերելու. գեղարուեստական երկերը նրանք ա-
նօրեալ կեանքի կոպիտ ակնոցներով են միայն

Նախագործի կողմից ուղարկված փաստաթուղթը սկսում է համազգային պահանջատիրությամբ, որ դատարանին չի դիմել, այլ հաշտության միջնորդին հանձնելով «գործադիր դեպի» վճարելով մի կողմ կրկին հարկի քաղցր կտորից կտանձնել համար, մի և նոյն ժամանակ նախագործի ստորագրությունն են վերցնում թէ գործադիր դեպի մեղադրանքները չունենան և ազգականները այլ եւս ոչ մի պահանջ չունենան:

Դուք կարող էք ասել, որ շատ սխալվում են այդ ազգականները, հաւատարմով նախագործի բարի ցանկութիւններին և չի դիմելով դատարան: Այո, բայց ինչ անէ: Դատարաններում գործը ձգձգվում է, նախագործը ունի փորձված փաստաբան և ամեն միջոց առաջ է քաշում: Երբեք չի գործը շուտ չի քննվի, յետագայի երկար ժամանակով: Փաստաբանական այս ճարպկութիւնը չի կարծէք թէ անմեղ մի բան է: Գիտեն որ այդպիսի միջոցով կարելի է կատարել յուսահատութեան հասցնել արեւն տէրերին: Եթ որ այդ խեղճները աղքատ են, մի, երկու, երեք և աւել ամիսներ մնալով Բագու, նրանք ուտում են իրանց հետ բերած կօլէկները և բառիս բուն նշանակութեամբ սովի մէջ են ընկնում: Իսկ դա հարկաւոր է փաստաբանին, որպէս զի կորէր արեւն տէրերի յամուսնութիւնը և ընդունել տալ նրանց այն իսկ պայմանները, որ ինքն է առաջարկում: Տանով տալով գործը դատարանի առաջին ինստանցիայում, նախագործը բողոք է տալիս բարձր ինստանցիային և այդպիսով կարող է տարիներ ձգձգել գործը: Ի՞նչ անեն սոված ու դժբաղդ արեւն տէրերը: Նրանք հարկադրված են ծախել իրանց պահանջը:

Բագուում ստեղծվել է զաղման փաստաբանների մի քանակ շրջան, որ գնում է այդ տեսակի պահանջներ, վճարելով 2000 ռուբլու պահանջի համար մի 50—100, շատ շատ նաեւ 200 ռուբլի:

Մի մոռանա՞ք, ընթերցող, որ այս բոլոր զգուշի շահատակութիւնները կատարվում են մի անչնչացած բանական գերեզմանի շուրջը: Մի մոռանա՞ք, որ այսպէս անողները բոլորին ներ չեն, այլ մարդիկ, որոնք նոյն այդ խղճալի բանուորների ձեռքով ոսկու կոյտեր են դադել և այժմ խեղճվում են, որ մի քանի հարկեր ռուբլի պակաս վճարեն այն արեւն փոխարեն, որ թափվել է իրանց բարեկեցութեան համար: Տրամադրական պատերազմը ընդհանուր բողոք և զգուշանք է դարձնել, որովհետեւ հազարաւոր մարդիկ զոհ են գնում անդրկական կապիտալիստների անկուշտ կողորդին: Հաւանքէք տարիների մի երկար շարք Բագուի նախագահները, հաշտեցէք հատ հատ զոհերին, որոնք այսպէս հարստանալով են, և զուգը մեզ մօտ էլ կունենան նոյն անարդարութիւնը, որից այժմ զզվում է ամբողջ աշխարհը: Այո, դրամատիկական դադանութիւնը մեզ մօտ նոյնպէս կողորդում է դիակները, չի պէս է փոխանցում է հարկերները և հազարների արեւն: Շրջեցէք Բագուի փողոցներում, և ձեռք ձեռքով զոհեցէք:

Գիտե՞՞ք, այդ պատճառով և անընդունակ են այդ երեքերի մէջ եղած գեղեցիկը, կատարելը, բարձրագոյնը տեսնել: Նա, ով որ արեւն տեսնի մէջ մերկ մարմիններ տեսնելով վայրենի բռնազգեստով է զեկալարվում, նման է այն կապիկին, որ նկարած կարկանդակները տեսնելիս զրափելու արտաքինով կտաւ պատառ պատառ է անում: Մօրից Զոն Եվինդ թէեւ մի փոքր խիստ, բայց անող արտայայտութեամբ բնորոշում է այս տեսակ մարդ-կապիկներին: «Ով որ առանց անպարկեշտ մտքերի չէ կարող մի մերկ մարդու նկարը տեսնել՝ նա մի խող է: Մերկութիւնը մաքուր՝ գեղարուեստական զգայականութիւնը դարձնելու նախապայմանն է, իսկ առանց մաքուր զգայականութեան՝ գոյութիւն չունի իսկական բարոյականութիւնը: Այն ինչ գերմանական ֆիլիստէրների պահանջած բարոյականութիւնը գերզգայական և բարոյականութիւն է և այս տեսակ բարոյականութիւնը—ինչպէս շատ ճիշդ կերպով նկատեց նորբա յայտնի արուեստագէտ—քննադատ Յոբից Ստալը—բարոյականութիւն չէ, այլ անբարոյականութիւն:

Արուեստագետ, մի նշե՛ք իսկ յաճախ անկամաւոր տպագրութիւններին ինքնուրոյն վերարտադրութիւնն է: Ոչ մի արգելք, ոչ մի սանձ չի պէտք է նրա ազատ ստեղծագործվելու պրօցեսը ինչպիսիք—հակառակ դէպքում ստեղծագործութիւնը լինում է օղի թէ գեղարուեստական, այլ արուեստական (բառը իր նշք նշանակութեամբ վերցված): Այնպիսի մի պահպանողական անձնատրուութիւն՝ ինչպիսին նշանաւոր

չըջապատէ կողերի, անդամալոյծների մի բաղմութիւն: Ո՞վքեր են այդ դժբաղդները, որոնք մի կտոր հաց ձեռք բերելու համար պատրաստ են ձեր կաշին պոկել իրանց աներես աղերսանքներով:—Իրանք այն մշակներն ու բանուորներն են, որոնք ձեռք, ոտք կամ այլ անդամ են կորցրել նախաճանքում և գուրս են չարամիլ այնտեղից:

ՆՅՈՒՆԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, երեքշաբթի, ապրիլ 2-ին, նշանակված է երկրաշարժից վնասվածներին օգնող թիֆլիսի գլխավոր կոմիտէի նիստը, որ տեղի կունենայ նախագահատեղի ընկերայնում: Սկզբն է երեկոյան 8 ժամին:

Մայրաքաղաքի լրագրիները հազորդում են, որ նախագործական երկու խոշոր ֆիրմաներ, այն է Նօբէլի և Կասպ-Սե ծովան (Բօշլի-դի) ընկերութիւնները համաձայնութիւն են կայացրել նախի վաճառահանութեան վերաբերմամբ և կազմել են Լօնդոնում մի խոշոր առեւտրական ակցիօներական ընկերութիւն:

Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ առեւտրական դաշնադր կապելու համար ֆինանսները միմյանքով իրենց ուղարկել է Պարսկաստան միմյանքով խորհրդի անդամ Գոյուբեկլին, գործարանների տեսուչ Շապուշիկովին և առեւտրի գեպարտամէնտի պաշտօնային Պիլկինին:

Լուրերին նայելով՝ մամուլի ներկայացուցիչները համագումար ժողովը Պետերբուրգում սկզբունքով թէեւ թոյլատրված է, բայց ժամանակը դեռ եւս որոշված չէ: Սկզբում որոշված էր համաժողովը կայացնել յունիս ամսին, և միացնել այն Գուտտենբերգի յօթնամեակին, բայց յետոյ, ի նկատի առնելով, որ ժամանակը շատ կարճ է և համաժողովի բոլոր նախապատրաստութիւնները չէ կարելի տեսնել, այդ միջոցով, վճռվեց յետագայ համաժողովը Եւթթաղում են, թէ համաժողովը տեղի կունենայ նոյնիմբեր ամսին:

Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան ժողովը, որ կայանալու էր կիրակի, ապրիլի 2-ին, տեղի չունեցաւ բազմաթիւ անդամների բացակայութեան պատճառով:

Թիֆլիսում, ինչպէս հաղորդում են լրագրիները, անպայապէս է մանկաբարձուհի օր. Տէր-Ասատուրեանը: Երկու չաբաթ է արդէն, որ տեղական ոստիկանութիւնը որոնում է անյայտացածին, բայց և այնպէս ոչ մի տեղ չէ կարողացել գտնել նրա հետքը:

Թիֆլիսի Յովնանեան-Մարիամեան օրիորդաց դպրոցի համար հոգաբարձու են ընտրված հետեւեալ անձինք—Իլիան Ալեքսանդր Բէհուդեանց, բժ. Կուկուշանեան, Ա. Յովնանեանեանց և բժշկապետ Անանեանց:

Կատմաբան Հ. Յոն Տրայկէն էր—անա թէ ինչ է ասում. «Միանգամ ընդմիջող պէտք է համոզվել, որ պետութիւնը երբեք չի պէտք է իստուրի արուեստի ներքին էութեան մէջ, արուեստն ունի իր սեփական և միանգամայն ինքնուրոյն գոյութիւնը, որ պետական իշխանութեան կամքից բացարձակապէս անկախ է»:

Բարոյականութեան և արուեստի մէջ եղած կապը մտադիր չէ՞ք այստեղ մանրամասն չօղիել, որովհետեւ դա մեզ բաւական կը հետաքննէր մեր ինդիւիդ: Աւելորդ չէ՞ք համարում սակայն այդ մասին նորագոյն ժամանակների ամենամեծ արուեստագէտներից մէկի՝ Գեօթի կարծիքը առաջ բերել. «Շատերը ծանօթում են շարունակ ինչ ֆիլիստէրների կիսաճիշդ ասացածը՝ թէ արուեստները պէտք է բարոյական օրէնքը ճանաչեն և նրան ենթարկվեն, առաջինը միշտ տեղի է ունեցել և պէտք է տեղի ունենայ, որովհետեւ ինչպէս բարոյականութեան, նոյնպէս և արուեստի օրէնքները բանականութիւնից են բխում. իսկ թէ երկուսը տեղի ունենան ար (արուեստի ստորադասումը բարոյականութեան)—այն ժամանակ արուեստները միանգամայն կ'որոշեն»: Հանձնարե՛ք բանաստեղծի այս սողերը կրկնակի ճշմարտութիւններ են ամփոփում: առաջին՝ առանց անկախութեան, առանց ինքնուրոյնութեան անմտածելի է իսկական արուեստը, երկրորդ՝ արուեստագէտը ստեղծագործելիս ոչ թէ առաջնորդվում է բարոյական օրէնքներով, այլ ակամայ, համարեա բնազդաբար ներգաշ-

Ստացանք Ս. Գարագաշի «Մէշադի եղի-սարէթ» վէպիկը, որ տպված է Մօսկվայում և թաղկացած է 95 փոքրագրի երեսներով: Գինն է 30 կօպէկ:

«Մշակ» № 62-ի մէջ երկրաշարժից վնասվածներին օգտին ստացված նուիրատուութիւններին մէջ մտել է մի սխալ. 100 ռուբլին մենք ստացել ենք թիֆլիսից, տիկին Նատալիա Մաքաթեանից, իսկ տպված է Մաքաթեան:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Վաղուց արդէն քաղաքը թոյլութիւն է ստացել բանալու նախկին հայոց Բարեգործական ընկերութեան գրադարան-ընթերցարանը, սակայն մինչև այսօր Զաքարիայի պապանձումն է տրուում մեր գումարում»:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Հասարակութեան խնդրքով» տ. Սիրանոյշ երկրորդ անգամ ներկայացրեց «Մէշէա» դրաման: Թատրոնում համարեա թէ բաց տեղեր չը կային: Տիկին Սիրանոյշ դարձեալ մեծ աջողութիւն ունեցաւ: Մեր փափկասուն օրիորդները և ատկները շատերը, որոնք միայն մի քիչ «ալալ-մալալ»ով, «կալալի կանին հայերէն», շատ ցաւում են, որ հայերէն լաւ չը գիտեն և մտադրվել են անպատճառ սովորել, որպէս զի կատարեալ գեղարուեստական բաւականութիւն ստանան և ոչ թէ միմիայն միմիկայով բաւականանան:

Մայրաքաղաքի Ռուսաց Կանանց Բարեգործական ընկերութիւնը որոշել է հրաւիրել յառու խորհրդակցութիւն՝ քննելու ռուս վարժուիչների վիճակը, մշակելու այդ վիճակի բարելոման միջոցներ և կողմնակցելու նրանց համար դաստիարակութիւններ:

ԵՒԱԼԻՍ կայարանից մեզ գրում են. «Եւրախում և Եւրախի մօտիկ չըջալալում առաջակութիւնները և գործիւնները խորհրդակցական ձեւ են ընդունել, և շնորհի այն հանգամանքի, որ ոստիկանութեան կենտրոնն այստեղից հեռու է, միշտ ամեն յանցանք անպատժ է մնում: Մարտի 28-ին, Եւրախից մօտ 3 վերտ հեռու գտնվող մի տեղ, Սիբիրից փախած երկու թուրք առաջակներ կողոպտում են Մարտիան-Մարտիկը եկող վաճառական Դուկաս Գեօգիւշանին, որից խլում են մօտ եղած 255 ռուբլի փողը, գօտին, ժամացոյցը և զէնքը, և վերջինքը մի կերպ աղաչանքով ազատվում է սպանվելուց: Ի հարկէ, հեշտ կը լինէր առաջակներին հետամուտ լինել և կալանաւորել, տեղի մօտիկութեան և հարկութեան պատճառով, եթէ միայն այստեղ լինէր ոստիկանութեան մի թեթեւ վարչութիւն»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Նախկին տարիների պէս այս Զատիկին էլ սկսել են եռանդուն կերպով «մատաղի» փող հաւաքել: Թէեւ հաւաքվող գումարը տարէց տարի քչանում է, նաև ու մ է իր ստեղծագործութիւնը այդ օրէնքների հետ»:

Թէ գեղարուեստի էութեան սպանացող այս օրինադիրը մեծ յուզում պէտք է առաջացնէր—չառ բնական էր: Ուրախվին այն է, որ նոյն իսկ կաթօլի բանակից անպակաս չեն բարեխիղճ և լուրջ անձնաւորութիւններ, որոնք իրանց բողոքը նոյնպէս միացնում են ընդհանուրին: Մի յայտնի հրապարակախօս՝ Կ. Մութ (Beremundus) նորերս հետեւեալ տողերն էր գրում. «Վաթօլի կուսակցութիւնը մի քանի դարերով յետ է մնացել. նա ռամկացի է (verbaudet), նա անընդունակ է արուեստի, ուրիշ վատից տարբերել. մի խօսքով նա վերջերս պայպիսի յիմարութիւններ և չը լսված ըթմարութիւն ցոյց տուեց, որ կատարեալ արհամարհանք է արժանի»:

Ոչ միայն պարբերական թերթերում, այլ և առանձին հրապարակական ժողովներում հասարակութիւնը իր արդար զարդիկն էր արտայայտում այդ ստորագոյն օրինադրի դէմ: Առաջին բողոքը մտնող տեղի ունեցաւ Բերլինում, ուր մամուլացում էին Գերմանիայի մտաւոր և գեղարուեստական աշխարհի ամենաընտիր ներկայացուցիչները. Բերլինից յետոյ շարժումը ծաւալվեց զէպի Գերմանիայի միւս քաղաքները՝ Մինխեն, Իրէզդէն, Կայպցիգ, Վայմար, Կարլսրուէ, Դրեսդէն և այլն: Իսկ Բերլինում կայանալիք երկրորդ ժողովը մի չը տեսնված երեւոյթ էր ներկայացնում. նշանակած ժամանակից դեռ մի քանի ժամ առաջ՝ ժողովարանի շուրջը այնպիսի

բայց հաւանորէն այս տարի կը հասնի հազար ռուբլու, մի պատկառելի գումար, որ անկասկած փչանում է անտեղի ժողոված գումարը աւելի նպատակաւորմար չէր լինի, որ քաղաքի անօրհական ընտանիքներին բաժանէին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բրիտանական զօրքի և Բօքթրասի այժմեան զրութիւնը Բլուսթօնէնում լինելու է Նապօլէօն I-ի զրութիւնը ռուսական արշաւանքի ժամանակ: Մի բարձրատիճան ղեկավարակ (Post) լրագրում, «Պրետորիա և Մօսկվա» յօդուածով համեմատում է այժմեան անգլիացիներին և 12 թի ֆրանսիացիներին և գալիս է այն եզրակացութեան, թէ անգլիացիները հասել են արդէն Սօլդանիին: Ի՞նչ կասէ նրանց Մօսկվան: «Ի՞նչ կը լինի այն ժամանակ, եթէ յամառ բօքթները, որոնք այլ եւս ոչինչ կորցնելու բան չեն ունենայ, երբ անգլիացիները գրաւեն Պրետորիան և որոնք, ընդհանրապէս, ամեն ինչ նորից կարող են գտնել, երբ յարձակվեն հաղորդակցութեան գծի վրա, որ հարկաւոր կիթմէտը երկարութիւն ունի: Նախնը աֆրիկական հրատապ անապատով ոչ նուազ կորստաբեր կը լինի, քան նահանջը Ռուսաստանի ձիւնապատ և սառցային ճանապարհով:

—Սօֆիայի «Телеграфъ» լրագրը, որ շատ մօտիկ յարաբերութիւններ ունի բօլշարիակի ղեկավարական միմիկայութեան հետ, մի յօդուածի մէջ գալիս է այն եզրակացութեան, թէ Բօլշարը, քաղաքական և ղեկավարական նկատմամբ, պէտք է յանձնվի Ռուսաստանին: «Մակեդոնիայի միացումը Բօլշարիակի հետ, առում է լրագրը, բօլշարների համար կենսաբիւն և մանկան խնդիր է: Այդ հարցը դիւրամատիկան ճանապարհով չէ կարող լուծվել: Նա կը լուծվի արիւնով և երկաթով: Դրա համար Բօլշարիային հարկաւոր է դաշնակից, իսկ այդ դաշնակիցը կարող է լինել ոչ այլ ոք, և թէ ոչ Ռուսաստանը, որի պատմական աւանդութիւնները պահանջում են տիրել Կ. Պօլսը և ազատ մեզ ու դարձ ձեռք բերել Դուրաւնէլի և Բօսֆօրի նեղուցներով: Ռուսաստանը այժմ հալոյմն է ցոյց տալիս դաշն կապել Բօլշարիայի հետ: Պայմանագրի դեռ եւս յայտնի չեն, բայց յայտնի է, որ Ռուսաստանը ուզում է առանալ Բուրգասը, որպէս մի կայարան իր առաւորմի համար և պատրաստ է իր վրա տանել բօլշարական փոխառութեան երախտաւորութիւնը, որ կազմաւոր Բօլշարիան աւատրիական կապիտալի ազդեցութիւնից, իսկ Բօլշարիան իր կողմից պարտաւորվում է բարեխալակել և ուժեղացնել իր զօրքի ռազմական ընդունակութիւնը: Թիւրքերի հետ պատերազմ ունենալու դէպքում ռուսաց զօրքերի մի մասը զբաղված կը լինի Ասիայում զսպելով թիւրքերի ասիական օյմերը, մինչդեռ Բօլշարիան զօրք պէտք է գործէ պատերազմի երօպական թափարակներում: Բայց եթէ Բուրգասը չամրացնվի, Բօլշարական զօրքը ապահովված չի լինի յետի կողմից: Բուրգասը Թիւրքիայի դէմ ամրացնելու համար հարկաւոր է ամենաաւելիք 20 միլիօն ֆրանկ, իսկ նրան ամրացնելու համար այնպէս, որ նա կարողանայ գիծանալ երկու միացեալ նաւատորմ—օրիւնալ, թիւրքական և անգլիականին, հարկաւոր է ծախսել 50,000,000 ֆրանկ: Հիմա երեւում է, որ Ռու-

բազմութիւն էր խնդրել, որ ամբողջ փողոցը զրութիւնի մի ծով էր ներկայացնում—հաւաքված երկսեւ բազմութիւնը 15,000-ից անցնում էր—այնպէս որ անակնկալ դժբաղդութիւնների տեղիք չը տալու համար ժողովը չը կայացաւ—մի երեւոյթ, որ ըստիւքան նոյնքան ազդու էր, որքան և կայացած ժողովը:

Առաջին ժողովը, որ տեղի ունեցաւ մարտի 5-ին, մեզ վրա շատ խոր տպաւորութիւն թողեց. ներկայ էին ամեն դասակարգի մարդիկ, առանց սեռի խտրութեան՝ հասարակ աշխատաւորից սկսած մինչև ամենաբարձր բոլոր ժուան: Ժողովը հրաւիրողներից ամենից առաջ աչքի էր ընկնում հոգաւոր պատմաբան օրոֆէսոր Թեօօր Մօսկէն՝ իր պատկառելի և սովորական գլխով, նրա կողքին, բազմ կաթնոտ բազմած էր Ն. Զուգէրման՝ իր գեղատեսիլ վայելչակաղմ և յաղթանդամ մարմնով: Բացի դրանից ուրիշ շատ արուեստագէտներ, հրապարակախօսներ, լայնատաղի անպաւնիւր և այլն: Բացի Զուգէրմանից, այդ օրը ճառախօսելու էին՝ Դուստաֆ Էրէրլան, Բերլինի Thiergarten-ի յաղթական ծառուղիի նշանաւոր արձաններ քանդակողը, պ. Հ. Նիսէն՝ դերասանական և թատերական ընկերութեան նախադարձը «Մշակ» էջերը մեզ թող չեն տալիս բոլոր ճառերը մանրամասնաբար առաջ բերել, այնպէս որ ստիպված ենք բաւականանալ միայն մի քանի ընդհանուր կէտերով:

(Կը շարունակվի)

ստատանը կարիք ունի Բուրգասին, որովհետև Օրդասան, իբրև առևտրական նախաձեռնող, կատարել է իր պարտքը և հետևաբար իր իրավունքները հանձնել է Կ. Պոլսից: Եթե Բուրգասին հրաժարվի Բուրգասը Ռուսաստանին յանձնելուց որոշակի պայմանով, Ռուսաստանը, այնու ամենայնիս, բռնի կերպով կը գրավէ նրան պատերազմի ժամանակ: Սրանից պարզ երևում է, որ Բուրգասին և Ռուսաստանի շահերը համապատասխան են և, ի հարկէ, ի նկատի առնելով Բուրգասին ֆինանսական նեղ դրութիւնը, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Բուրգասն ամբողջովն բոլոր ծախսերը Ռուսաստանին իր վրայ կանխի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

31 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 31-ին թագաւոր Կայսրը այցելեց Կայսերական տան դամբարանը: Մարտի 31-ին Նոյա Մեծութիւնները Օգոստոսի առաջին օրը հետ միասին ուղեւորվեցին Մոսկվա:

ԱՆԿԱՎՈՐՏ: Բռնիւնքի ստացված են վէպէրէնի վերաբերեալ տեղեկութիւններ, որոնք, ինչպէս հաւատարմութեամբ են, հիմնված են պաշտօնական հաղորդագրութիւնների վրա: Այդ տեղեկութիւններով երեքշաբթի դէպքը յորեքշաբթի անգլիացիները դուրս եկան վէպէրէնից և յարձակվելով բռնիւնքի վրա՝ խեղճ նրանցից մի թնդանօթ և չորս հասն էլ անպէտքացրին Մի քանի բռնիւնք գերի ընկան: Նրանց զինուորային չորսը կամ վիրավորված են կամ սպանված:

ՄԻՒԱՆ: Այստեղ եկան բռնիւնքի պատուիրակութեան անդամները և հարաւաֆրիկական հանրապետութիւնների գեսպան Լէյդա: Վերջինը պատուիրակութեան անդամների հետ երկարատեւ խորհրդակցութիւն ունեցաւ, որին ներկակցում էր նաեւ հոլանդական հիւպատոսը:

ԲՕՄԲԵ: Լուրջ վտանգ է սպառնում այն ապստամբութիւնը, որ ծագել է Կապուրեան չրջանի բնիկների մէջ: Ամբոխը աւերեց մի շատ մասը և մի ջրաղաց: Կանչված են զորքեր 10 մարդ սպանված է: Ապստամբները սպանեցին 5 ռուսիկների և դիակները գցեցին այրվող շատմարանի մէջ: Կարգը վերահաստատված է: Ամեն տեղ աշխատանքները ընդհատված են: Ազգաբնակչութիւնը թշնամական դիրք է բռնել Կապուրեանի և տեղական զորքը չընդունել քաղաքի մէջ և պահպանում են ջրաղացները և գործարանները:

ԼՕՆԴՈՆ: Բրումֆոնտէնից հաղորդում են, թէ գնդապետ Դալգլիշի դիրք է գրաւել վէպէրէնի մօտ: Բուլկովիչը ստացած տեղեկութիւններին նայելով՝ բռնիւնքի մի զորաբաժին տրեց քաղաքին:

1 ապրիլի

ՄՕՍԿՎԱ: Այսօր առաւօտեան 10 ժ. 40 ր. Պետերբուրգից ժամանեցին Նոյա Մեծութիւնները Օգոստոսի առաջին օրը հետ միասին ուղեւորվեցին Մոսկվա: Նրանց զուգորդի վրա պատի նման շարված էին հազարավոր մարդիկ: Երբ Կայսերական գնացքը մօտեցաւ Կայսերանին՝ Նոյա Մեծութիւններին դիմաւորեցին Նոյա Բարձրութիւններ Մեծ իշխան Սերգի Ալեքսանդրովիչ իր Ամուսնուհետ և Մեծ իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ և բարձրաստիճան անձինք: Վազմանքը դուրս գալով Նոյա Մեծութիւնները ողջունեցին դիմաւորողներին, այդ ժամանակ քաղաքացիները բաղդ ունեցաւ Նորին Մեծութեան թագուհուն մի չքեղ ծաղկափունջ մատուցանել: Կազմված վարդերից և օրիւնդիւններից, իսկ Նոյա Բարձրութիւն Մեծ-Իշխանութիւններին մայիսեան ծաղիկներից կազմված ծաղկափնջեր: Նոյա Մեծութիւնները հեռացան Կայսերանից՝ Նիկեյ ժողովրդի բարձրագոյն ռեբան, որ անդուլի կերպով լավում էր ամբողջ ճանապարհին: Ժողովրդի ցնծութիւնը անսահման էր: Զանազան պարի վրա դանդաղ եկեղեցիներից Նոյա Մեծութիւններին դիմաւորելու համար դուրս էր գալիս հոգեւորականութիւնը: Բոլոր եկեղեցիները զանգալները հնչում էին: Իվերեան Աստուածամոր մատուռի առաջ Նոյա Մեծութիւններին դիմաւորեց Նեստոր եպիսկոպոսը: հոգեւորական դասի հետ խաչով և օրհնած լուրջ Նոյա Մեծութիւնները համբուրեցին: Կազմված հրաշագործ պատկերը: Եպիսկոպոսը և պատկերները մատուցեց Նոյա Մեծութիւններին: Մատուռից դուրս գալով Նոյա Մեծութիւնները գնացին Կրէմլի պալատը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը հրամայեց ձեռնամուկ լինել Պետերբուրգում Կայսր Ալեք-

սանդր III-ին արձան կանգնեցնելու գործին ի յիշատակ Սիբիրի երկաթուղային մեծ ճանապարհի շինութեան աւարտման, որի հիմքը դրված էր ի Տէր հանգուցեալ Կայսրի հրամանով: Արձանը պէտք է կանգնեցնել քանդակագործ իշխան Տրուբեյկոյի և ճարտարապետ Շեխտելի նախագծով: Զնամենսկի հրապարակի վրա, Նիկոլայեւսկի կայսրանի դիմաց, որպէս Սիբիրի երկաթուղու սկզբնական կէտի Գործի գլխավոր ղեկավարութիւնը յանձնված է Սիբիրի երկաթուղու մասնաժողովին, իսկ արձանի նախագիծը մշակելու և շինութեան աշխատանքները վրա հանելու համար կազմված է առանձին մասնաժողով, նախագահութեամբ ակադեմիկոս իշխան Գոլցիցին:

ՐԵԴԴԵՐՍԻՈՒԳ: Երբորդ բրիտանական զինվորական Բերանիայից եկաւ պատեղ, առանց ընդհանրումն ունենալու թշնամու հետ, որ դանդաղ է Մոսկովիցի մօտ, վէպէրէնի հաւաքակողմում: Վէպէրէնի բերդապահ զորքը լաւ է պաշտպանվում: Մօտիկ ապագայում տեղի կունենան նշանաւոր դէպքեր:

ԼՕՆԴՈՆ: Բօլեքտոս հեռագրում է Բլումֆոնտէնից, թէ թշնամու շարժումն դէպի հարաւ դարձելով վէպէրէնը դեռ ևս չընկալատու է: Բայց փոքրամիջ ընդդաւան զորքը դարձաւ մասնակի դիմադրութիւն է ցոյց տալիս: Օգնական զորքեր են ուղարկված այնտեղ: Զօրքերի առողջապահական զրութիւնը հիմնալի է: Եղանակը լաւ է:

ԲԼՈՒՄՖՈՆԵ: Այսօր, կէսօրից յետոյ, տեղեկութիւն է ստացված, թէ բռնիւնքը յետ են մղված վէպէրէնից մեծ կորուստներով: Ասում են, թէ նրանց չորս զինուորները սպանված են և երկու թնդանօթ փչացրած: Բռնիւնքը, լուրերին նայելով, դադարեցրին պաշարումը և նահանջում են դէպի հիւսիս:

ԱՆԿԱՎՈՐՏ: Բռնիւնքի մի զորաբաժին Ստոգլիսկայից յետ է քաշվում դէպի վէպէրէն: ՕՐԵՍՏԱ: Կայսրուհի Նիկոլայեւնա II-ի արձանը վերջնականապէս որոշված է բանալ մայիսի 6-ին:

ԼՕՆԴՈՆ: «Daily News»-ին հաղորդում են Կապուրեանից, թէ հոլանդացի ագարակատէրեան լորմանները հարաւ-արեւմտեան չրջաններում, այսինքն Սվեյնհուդում և Կալէդէնում, լուրջ կասկածներ է յարուցանում: Հոլանդացի նշանաւոր ագարակատէրից մէկը յայտնեց, թէ նրա չրջանի հոլանդացիների մեծամասնութիւնը ապստամբելու համար միայն յարմար երկու րօպէլ է սպասում: Հէնց նա միայն 500 մարդ սպառնալիկութեամբ համար ունի հրապարակներ և ռազմամթերք:

«Times»-ին հաղորդում են Թէհրանից, թէ Շահը ճանապարհ ընկաւ Թաբրիզի վրայով դէպի Եւրօպա: Նա ամենից առաջ ծպտեալ կերպով կը գնալ Կոնստանդնուպոլիս և ապա պաշտօնապէս կայցելէ եւրօպական մայրաքաղաքները՝ մկնելով Պետերբուրգը:

«Times»-ին հեռագրում են Համբուրգից: «Վէպէրէնում գնդապետ Դալգլիշի զորաբաժինը չընկալատու բռնիւնքի թիւը մի քանի հազարի է հասնում: Նրանք 10 թնդանօթ ունեն, որոնցից երկուսը Մաքսիմի թնդանօթներ են: Անգլիացիները քաղաքից պաշտպանվում էին երկուշաբթի օրվայ և երեքշաբթի դէպքից յարձակումների դէմ: Հինգշաբթի օրը տեղի ունեցաւ երկարատեւ թնդանօթաձգութիւն: Մենք հաստատ չոյս ունենք, որ յետ կը մղենք ամեն մի յարձակում: Մեր ուսուցիչ ղեկավար պաշարը առում է»:

Կ. ՊՕԼԻՍ: Սաի կաթնուղիքական ընտրութիւնը նորից յետաձգված է: Իրիւզ-Կիսուում աշխատում են բաւարարութիւն տալ հայոց պատրիարքին, որ պնդում է իր հրաժարականը:

ՊԱՐԻԶ: Լուրէն Նիւսան պալատից նստեց հանդիսարան օրերի կառքը: Նրան ուղեկցում էին ուրիշ չորս կառքեր, որոնց մէջ նստած էին բոլոր մինիստրները, բացի Գալիֆէից և Միլիերանից: Հանգիստը դադարեց, որի յետեւից արշաւում էին կիրաւիներ, հասաւ ուսումնական դասը ժամի 2-ին: Լուրէն Ֆրակու և պատուաւոր լեյտենանտ Ժապալէնով էր: Ներսիս զինուորացի Միլիերան, Պիլար և ցուցահանդէսի վարչութեան գլխավոր անդամները: Լուրէն ողջունեցին օտար պետութիւնների ներկայացուցիչները և գործակալները: Պաշտօնական տնձնիք, դեսպաններ, օտարերկրացի գործակալները, նոյնպէս և հասարակութիւնը: Լուրէն ողջունում էին Լուրէնի աղաքակներով, մի և նոյն ժամանակ երաժշտական խումբը նուագում էր մարտիլէզը: Տեսարանը վեհ էր: Միլիերան ճառ արտասանեց, որին պատասխանեց Լուրէն: Նախագահ իր ուղեկիցներին հետ

անցաւ հիւրասենեակը, որտեղ ընդունեց օտար գործակալներին շնորհաւորութիւնները:

2 ապրիլի

ՊԱՐԻԶ: Նիւսան պալատի շուրջը և Նիւսան դաշտերում, նախագահի ամբողջ ճանապարհի վրա, հաւաքվել էր անպակն թաղմունքիւն: Լուրէն էին աղաղակներ. «Կեցցէ Լուրէն, կեցցէ Վալդէի»: Երբ անցնում էին կիրաւիները՝ ժողովուրդը աղաղակում էր. «Կեցցէ զօրքը»: Գալիֆէն, որի ձախ ոտը ցաւում է, ստիպված էր հրաժարվել ցուցարանից: Բայց մանր ներկայ լինեց:

ՊԱՐԻԶ: Օտարերկրեայ գործակալները լսեցին Լուրէն ճառը կանգնած: Երբ նախագահը տեղից վերկացաւ խօսելու, դասիճի բոլոր ծալերից հնչեցին օտարերկրացիների միահամուռ ծափահարութիւնները: Ժամը 3-ին և 20 ր. Լուրէն, ուղեկցութեամբ մինիստրների, դեսպանների, օտարերկրեայ գործակալների, սենատորների, պատգամաւորների և ուրիշների, անցաւ Մարսեան դաշտով՝ ծափահարված ժողովրդից և ժամը 3-ին ու 58 րօպէին Սենայի վրա նաւակ նստեց:

ՊԱՐԻԶ: Ցուցահանդէսի բացումը կատարվեց միաժամանակ երկու այնպիսի շինութիւնների օրհնութեան հետ, որոնք կրում են ամեն մի առաջին համար թանկագին անուններ—Կայսր Նիկոլայ II-ի և Ալեքսանդր III-ի: Նոր փողոցը, որ սկսվում է Նիւսան դաշտերի մօտ գեղարուեստի համար յատկացրած երկու գեղեցկաչէ պալատներով, ստացաւ Նիկոլայ II Կայսրի անունը: Այդ փողոցը ձգվում է Կայսր Ալեքսանդր III-ի կառուարի վրայով մինչև Ինվարդիների հրապարակը և պատկերացնում է մի հրաշալի—առաւելական տեսարան: Օտարերկրեայ բաժնիների մէջ առասպալան ամենից աւելի պատրաստ է այս րօպէին: Երեք արդիւնագործ-Ռուսաստանը հանդէս չէր եկել եւրօպական ցուցահանդէսներում ապալիս փառահեղ տեսքով: զանազան բաժանմունքների 2,400 քաղաքականները տեղաւորվել են գեղեցիկ և ինքնաձեւ պալիթիւններում Տրոպեոլիում:

Կրեմլի ձեւակերպութիւնը մի ճարտարագիտական խաղալիք է, որով չափազանց հիմնում է հասարակութիւնը: Ինվարդիների հրապարակում ամենից հայեցողքը գրաւում են առասպալան ոճով կառուցված զանազան շինութիւններ, որոնք պարունակում են իրանց մէջ Կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների բաժինը, որտեղ բազմաթիւ առարկաներ ընդարձակ հասակաւորութիւն են տալիս առաջ հասարակութեան այն դարմանալի գործունէութեան մասին, որ արդիւնք է Ռուսաց Թագուհու ազնիւ սրտի: Հանրապետութեան նախագահը ջերմ կերպով շնորհաւորեց իշխան Տենիշևիչին և յայտնեց, թէ առանձնապէս կայցելէ բոլոր առասպալան բաժինները:

Ս. ՀԵՂԻՆԵ: Այսօր այստեղ հասաւ գեներալ Կրօնի իր ամուսնու և երեք օֆիցերների ու մի գնդապետի ուղեկցութեամբ: Նրանց դիմաւորեց նախագահը: Երբ նախագահը իր ամուսնու հետ Մի ժամի չափ այնտեղ մնալուց յետոյ, գերիները գնացին Կենտ-Կոստեղով: Կրօնի լաւ է զգում իրան Միւս գերիները մնացին նաւի վրա, որին խիտ հեղկում է «Niobe» նաւը: Այդ գերիներին ափ կը հանեն երկուշաբթի օրը:

ՊԱՐԻԶ: Ներքին գործերի մինիստրութեան մէջ ստացած հեռագրիկներից երեւում է, որ ցուցահանդէսի բացման առիթով գաւառներում ամեն տեղ ոգեւորված տօնակներով շիններ են կատարված:

ՊԱՐԻԶ: Նախագահի և նրա շքախմբի ճանապարհին Սենայի ափերը սեւացած էին ժողովրդի բազմութիւնից: Անըդհատ հնչում էին ոգեւորված աղաղակներ: Ցամաքային և ծովային զօրքերի պալիթիւնների առաջ շարված էին ուսումնականները, որոնք զինուորական պատիւ էին տալիս: Օտարերկրեայ պալիթիւնները զարդարված են ծաղիկներով: Բազմաթիւ անձինք, որոնք գտնվում էին այդ պալիթիւններում, կեցցէներով ողջունում էին նախագահի շողմանը: Այն ժամանակ, երբ շողմանը անցնում էր պալիթիւնների մօտով, պետութիւնների դեսպանները նրանց վերաբերմամբ բացարձակութիւններ էին տալիս: Լուրէն չոգնաւից երկար նայում և զուարճանում էր օտարերկրեայ պալիթիւններով: Սենան անպայման կախարհական տեսարան էր պատկերացնում: Լուրէն անցնելու ժամանակ պալիթիւնները ողջունում էին նրան և նրանց մէջ գտնվող բազմաթիւ օտարազգիներից: Կեցցէ էին աղաղակում ի պատիւ Յրանախի և նրա նախագահի: Այն անձինք, որոնք

հաւաքվել էին Կայսր Ալեքսանդր III-ի կառուարի վրա, ողջունում էին գնացքը: Երբ նա մօտեւում էր կառուարին: Կառուարի մօտ Լուրէն դիմաւորեց իշխան Ռուբուսովի, որ շնորհակալութիւն յայտնեց նրան կառուարին տուած անուան համար: Մի րօպէ Լուրէն զուարճացաւ նայելով Ինվարդիների հրապարակին, եւայդեցքը անցաւ կառուարի վրայով: Լուրէն աջ կողմը գնում էին Միլիերան և Վալդէ-Լուսա, ձախ կողմից՝ առաջ և ուղեկցական դեսպանները: Գնացքը անցաւ կառուարի և շարունակեց ճանապարհը Կայսր Նիկոլայ II-ի ծառուղիով:

ՄՕՍԿՎԱ: Այսօր, երբ տօնվում է Քրիստոսի մուտքը Երուսաղէմ, առաւօտեան 10 ժ. 45 ր. տեղի ունեցաւ Բարձրագոյն եղբ Կրեմլի Մեծ պալատից դէպի Ռուսկոնսկի մայր եկեղեցին: Ապառապչին ներկայ լինելու համար, ժողովուրդը լցրել էր ամբողջ հրապարակը մայր եկեղեցիների մէջ տեղում, խիտ պատի նման բռնել էր այն կառուարին, որոնցով անցնում էր Բարձրագոյն գնացքը: Պետական խորհրդի անդամները, մինիստրները, սենատորները, ստասակերետարները և պատուաւոր իննամակալները հաւաքվել էին Ռուսկոնսկի տաճարում: Եկաւ Ռինսոն դասիճում հաւաքվել էին պալատական տիկիները, պալատական աստիճանաւորները և ասպետները, նոյնպէս և Եկաւ Ռինսոն չքանչաւ ունեցող տիկիները: Գահական Անդրէյեւիչի դասիճում կանգնած էին բոլոր զինուորականները: Ալեքսանդրեան փառահեղ դասիճում հաւաքվել էին քաղաքային տիկիները, Մօսկովայի վարչական և դատաստանական հիմնարկութիւնների գլխավոր աւստիճանաւորները: Աշխուականութեան, զեմսաւօյի և քաղաքների ներկայացուցիչները տեղեր էին բռնել Գէօրգիւվի մեծ դասիճում: Վարդմիրսիկի դասիճում հաւաքվել էին վաճառականութեան, մեղաների, արհեստաւորների և կառաւանների ընկերութիւնների ներկայացուցիչները: Ս. Գալիթում անց էին գրաւել հոգեւորականութիւնը և խաչվառակները:

ՄՕՍԿՎԱ: Ռուսկոնսկի տաճարի հարաւային դասիճում Նոյա Մեծութիւններին դիմաւորելու համար դուրս եկան Մօսկովայի միարօպօկի Վարդմիրսիկ խաչով, Նեստոր և Պարֆենի եպիսկոպոսները, պալատական աւագ-քահանայ Յանիչով և այլ հոգեւորականներ կորսունեան խաչերով և Աստուածամոր պատկերով: Թագաւոր Կայսրը Նորին Մեծութեան կազակների գնդի համագլխավոր և Անդրէյեւիչի ժապուէնով էր, Թագուհին—պալատի գեներալ և սպիտակ թիկնոցով: Դասիճներից անցնելիս Մօսկովայի քաղաքացիները աղ ու հաց մատուցեց Նոյա Մեծութիւններին և ողջոյնի ճառ արտասանեց: Թագաւոր Կայսրը պատասխանեց քաղաքացիին: «Շնորհակալ եմ ձեզանից ընդունելութեան և արտայայտած ցանկութեան համար: Կայսրուհին և ես շատ բաղժաւոր ենք, որ կարող ենք ձեզ հետ միասին մեր թանգագին Մօսկովայում անցկացնել աւագ-չաբաթը և դիմաւորել Մեծ-տօնի ս. օրերը»: Դասիճում աղ ու հաց մատուցին այն ստարօօրենաւորները, որոնք ընդունում են քահանայութիւնը և դատակարգերի ներկայացուցիչները: Մայր-եկեղեցու զանգի մօտ միարօպօկի Վարդմիրսիկ ողջունեց Նոյա Մեծութիւններին ճառով: Համբուրելով խաչը Նոյա Մեծութիւնները մասնաւորապէս Միարօպօկի օրհնեց Թագաւորին և Թագուհուն: Ապա տիկիներով Պատարագից յետոյ, ժողովրդի ոգեւորված աղաղակներով և զանգահարութիւնով, Նոյա Մեծութիւնները գնացին Զուգով վանքը, որտեղ նրանց դիմաւորեց վանահայրը: Նոյա Մեծութիւնները համբուրեցին ս. նշխարներին և ապա ներքին անցնելով մտան Նիկոլայեւսկի պալատը, իսկ այնտեղից կառքով գնացին Կրեմլի մեծ պալատը: Երէկ երեկոյան 7 ժամին Նոյա Մեծութիւնները այցելեցին Օգոստոսիան գեներալ-նահանգապետին: Ժողովուրդը հանդիպում և ճանապարհ էր դնում Նոյա Մեծութիւններին ցնծութեան աղաղակներով:

ԼՕՆԴՈՆ: Առաւօտեան լրագրիւններում տրված է մի հեռագիր Բրումֆոնտէնից, թէ երէկ արքայական հայաւաղներին գնդի պահակախումբը, որի հետ էր նաեւ լուրջ Լապլին, գերի առնվեց: Բազմաթիւ ուղարկված է Կրօնապալ:

ԲԼՈՒՄՖՈՆԵ: Բօլեքտոս հեռագրով կրկին գէրին նախագորչացրեց այն վաբմունքի առիթով, որին ենթարկվում են Պիտոբիլայում գերի վերցրած օֆիցերները և զինուորները: ՀԱՍԳԱ: Հարաւ-Աֆրիկական հանրապետու-

